



631.4:55(47.925)

4


Բ. ԳՍԼՍՑԱՆ

# ԱՐԱՋԴԱՑԱՆԻ ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԱՑ ՅՈՂԱԳԻՑԱ- ԿԱՆ ԺԱՆԱՊԱՐՅՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Արադդայանի տափաստանի հոդային ծածկոցի վերաբերյալ հետազո-  
տությունները, վոր Հայքատեսությունը ձևափոխելը եր առաջիկա մեկու-  
րոցիայի նպատակով և հոդադոյացման տեղական պայմաններին ծանոթա-  
նալու համար (վորպիսի պայմաններն առայժմ գյուղատնտեսական մշա-  
կույթի տեսակետից բացասական ընույթ են կրում), ներկայումս իրագործ-  
ման սկզբնական շրջանի մեջ են գտնվում:

Արադդայանի տափաստանի նման գետափայ գաղտնավայրերի հետազո-  
տությունը, վորոնք մեր զոտում սովորաբար բազմաձև և կոմպլեքսային  
ծածկ ունեցող ճանաչած և աղիացած հոդեր են, կարող են նախ և առաջ  
գաղտնային հետազոտության հատուկ մեթոդիկայի, վորը բացի երկրագի-  
ցիայի հատուկ տեխնիկական սարքավորումից (համապատասխան աշխա-  
տանքի միջավայրի ծանր պայմաններին) — գանադան հոդային հետազո-  
տությունների ընդհանուր շարքից տարբերվում և կերտավող դործե-  
լակերպով, Եստիոմներով (прим.) Այդ դործելակերպով և, վոր ամե-  
նամեծ ճշտությամբ պիտի պարզաբանվեն թե այն հիմնական բնա-  
կանոնությունները, վորոնցով պայմանավորված և հոդադոյացումների  
ամբողջ խայտարակետ փոփոխությունը և թե այդ դոյացումների տարածման  
տերիտորիան, վորովհետև նրանց քարտագրությունը (cartographia) մեծա-  
զույն հափով պիտի ղեկավարվի ինտերպոլացիայի բացառման գծով:

Ամենակատարյալ ճշտություն ու պատկերի ամբողջությունը հասած  
լինենք, յեթե հոդի ծածկի հետազոտություն հետ միաժամանակ կատարած  
լինենք նաև վայրի հորիզոնականների նկարումը. սակայն, քանի վոր այդ  
նկարումը տեղի չի ունեցել, Արադդայան տափաստանի հոդերի հետազո-  
տություն համար վերին աստիճանի արդյունավետ սխեմա և մեղ թվում  
պրոֆ. Նարեկիսի առաջարկած հոդային յերեքֆաղյան նկարումը, վորի  
ծրագրով ներկայումս ղեկավարվում և զլխավոր գծերում այժմյան վողջ  
գաղտնային աշխատանքը: Առաջին ֆաղի սվալների մշակումը միաժամա-  
նակ հնարավորություն և տալիս ստանալու հետազոտող վայրի հոդա-  
դոյացումների ընդհանուր սխեման և գծելու այն տուանձնահատկություն-  
ները, վորոնց վրա հետազոտում մեծագույն ուշադրություն պիտի դարձվի:



կարճ ժամանակում կատարված աշխատանքների առաջին ֆազը որիննտրի ընդլայն է կրում, վորը նվիրված է Արաղդայանի տափաստանի հողագոյացումների վորոշման, դասավորման (կլասիֆիկացիայի) և քարտագրումը, —գոյացումների, վորոնք յինթակա յեն հետագա դետալիզացիայի:

Երազեդիցիան կատարել էմ մասնակցությամը եքսկուրսանտներ կ. Գ. Շահ-Մուրադյանի և Վ. Ա. Աթանասյանի, մասամը վորով, մասամը ֆուրգոնով, վորով փոխադրվում էր նաև մեր ամրողը սարքավորումը: Այս որիննտրի հետադոտիչ եքսպեդիցիայի աշխատանքները, դժբախտարար, ակամա ստիպված յեղանք դադարեցնել ֆուրգոնատեր Սենեքերիմ Պաշտոյանի վորըրդական մահվան պատճառով, վորը տեղի ունեցավ ոճի խայթոցի, ուստի եքսպեդիցիան ստիպված յեղավ վերադառնալ Յերևան:

Կարճատև եքսպեդիցիայի ընթացքում խումբը կատարել է միջանի, ընդհանուր բնույթ կրող, մարշրուտներ և յերկու մարշրուտ մինչև Արաքսը — ըստ գետի լայնության, դրել է 27 հողային կտրվածք (100—150 մմ. խորությամը), հավաքել և հողի առավիլ քան 100 ձրարային նմուշներ, զրի յև առել մի շարք դիտողություններ: Ստացված ամրողը նյութը յինթարկված է կամերալ քննության ու պատշած մշակման: Արաղդայանի տափաստանում ժողոված հողերի քիմիական և միխանիկական վերլուծումները կատարվել են Միացյալ Կինտր, Լաբորատորիայում՝ Գ. Անանյանի և Ա. Զիթլյանի աշխատանքով:

Արաղդայանի տափաստանի հողային ծածկի վերաբերյալ ներկայումս մեր ունեցած տեղեկությունները, վոր մենք առաջ ենք բերում այս հոդվածում, մեն հափով լայնացված են թե անոյալ տարվա հետադոտության նյութերով և թե մանրամասն հետադոտության տվյալներով մոտ 850 դեպյատին պարփակող այն փոքրիկ հողամասի վերաբերյալ: Վորը տափաստանի հյուսիս-արևմտյան անկյունն է զրավում և պատկանում է «Արաղդայանի» սերմաբամբակային տնտեսությանը (СЕМХОЗ): Այդ վերջին հետադոտությունը սույն տարվա սպրիլ ամսին կատարել և հեղինակը ներկա հետադոտության եքսկուրսանտներից մեկի մասնակցությամը Հիլյալ վայրի հողածածկի ուրվագիծը, վորը ի հետևանք աշխատանքի կազմված է 1 մմ. = 100 մետր մասշտաբով և տրվում է այստեղ կցվող սխեմայի մեջ, ի վիճակի յև լուսաբանելու հողերի այն արաղընթաց փոխանցումը, վորը ընդորոշ և վերնախալներում հափազանց աամկություն ցուցաբերող կոմպլեքսային շրջանների համար և միշտ նկատվում է Արաղդայանի տափաստանի ամրողը տերրիտորիայի ուսումնասիրության ժամանակ:

Բացի այդ, սույն վայրի բնապատմական բնութագրի մասին հիմնական տեղեկություն և տալիս նաև Լ. Գ. Ռոմանովի կուտակված ստվար նյութը. 1913—1914 թ. թ. Ռոմանովը կատարել և տափաստանի առաջին ջրաբանական, յերկրա-բուսաբանական և հողային հետադոտությունները:\*)

Հողածածկի այժմյան մանրամասն հետադոտության համար ամուր

\*) Л. Гр. Романов. Почвенные, гидрологические и геоботанические исследования Араздайнской степи. Тифлис 1915 г.

որիննտրի հիմք և ծառայում ներկա շրջանի հորիզոնտալ նկարի ուղղագիծը, վորը գեղեցիկ կերպով կատարել և տեխնիկ Ա. Ա. Բուսովը:

Արազդալանի տափաստանը, վորը մոտ 20 վերստ տարածությամբ վրա ձգվում և Արաքս գետի ձախ ափով, գտնվում և ծովի մակերևույթից մոտ 800 մետր բարձրությամբ վրա և հանդիսանում և մի հովիտ, 3 կողմից նեղված լեռնաշղթաներով: Արևելքից Սարայբուլաղ սարերն են կանգնած, հաջովից՝ Բելիզաղի շղթան և արևմուտքից՝ Մեծ և Փոքր Արարատները գաղաթները, իսկ հյուսիսային կողմից նա հանդիսանում և Յերևանյան դաշտավայրի ձախեղբայ մասի շարունակությունը:

Այն հանգամանքը, վոր այստեղ հողագոյացման յուրահատուկ ազդակները զուգադրվում են վայրի անդադրական պայմաններին, վորպիսի զուգադրվումը տափաստանի տերրիտորիայի վրա է վերջո դոյացրել և դանազան «ազահողերից» և ճահճացած հողամասերից կազմված բավականին մեծ տարածություններ, — այդ հանգամանքը ետևս զատում և Արազդալան տափաստանը Յերևանյան դաշտավայրի մյուս մասերից և մեզ հիմք և տալիս հողի տեսակետից համարելու այն առանձնապես, իբրև առանձնահատուկ, անկախ մի շրջան: Թե կլիմայական պայմանները կողմից և թե այն տեսակետից, վոր անապատի հողերն ապահովված են ամենազլխավոր սննդաբար, հանքային նւթիղեններով, վորոնք ընդ սին այստեղ բույսերի համար ամենահեշտ յուրացվելիք ձև ունեն, Արազդալանի տափաստանը բացառապես նպաստավոր պայմաններ և ներկայացնում բարձր արժեքավոր բույուղատնտեսական բույսերի մշակույթի համար: Մինչդեռ հողի մեջ ճահճացումը և աղի դոյության պարագաները՝ հնարավորություն չեն տալիս ամբողջ նափով ոգտագործելու նրա բնական հարստությունները: Հիշենք, վոր Ռոմանովի կատարած սխեմատիկ հաշվով (պլանիմետրով) դուքս և դալիս, վոր Արազդալանի տափաստանի 10.290,8 գեսայաին ընդհանուր տարածությունը աղիացած հողամասերի (շոռերի) վրա ընկնում են հետևյալ տոկոսները՝

|                                |   |         |               |    |      |         |           |     |           |                               |
|--------------------------------|---|---------|---------------|----|------|---------|-----------|-----|-----------|-------------------------------|
| 57 <sup>0</sup> / <sub>0</sub> | — | ի մեջ — | աղերի բովանդ. | -1 | արշ. | խորութ. | խավի մեջ՝ | վոչ | ավելի քան | 1 <sup>0</sup> / <sub>0</sub> |
| 25 <sup>0</sup> / <sub>0</sub> | » | »       | »             | »  | »    | »       | »         | »   | »         | 2 <sup>0</sup> / <sub>0</sub> |
| 18 <sup>0</sup> / <sub>0</sub> | » | »       | »             | »  | »    | »       | »         | »   | ավելի քան | 2 <sup>0</sup> / <sub>0</sub> |

Հասկանալի չե, վոր առաջին հետազոտությունից անցած 14 տարիների միջոցում, — հետազոտություն, վոր բնավ մաշրաբան չի յեղել, — հողամածելը, նկատի ունենալով ջրային ռեժիմի պայմաններում կուտակվող փոփոխությունները, կարող եր և պետք և յենթարկվել վորոշ կերպարանափոխությունների թե քիմիական կազմի և թե հավանաբար մորֆոլոգիական հատկանիշների կողմից: Ի միջի այլով, ինչպես ցույց են տալիս մի քանի նախնական տվյալներ, այդ կերպարանափոխությունը անդրադարձել և մասամբ բացասական կերպով: Իրենակ՝ մի քանի հողամասերի (սևերմտտես, Семхоз) վերաբերմաբ կարելի չե արձանագրել հողի ֆիզիքական և քիմիական հատկությունների վատացումը (այլալիուլթյան սաստկացումը, կազմվածքային խտացած հորիզոն B-ի դոյացումը), ուստի ամենասուր կերպարանք և ստանում Արազդալան տափաստանի հողերի բարելավման խնդիրը: Առանց այդ՝ յերկրի տնտեսությանը վտանգ և

սպառնում, վոր նա բարձրարժեք գյուղատնտեսական մշակութիւնների ամե-  
նահարուստ շտեմարանների մեկից կզբկվի:

Անցնենք հետադուրս վայրի հողագոյացման պայմանների համա-  
ռոտ քննութեանը:

Արազդաշանի տափաստանը՝ ինչպես և վողջ Յերեանյան դաշտավայրը,  
վերաբերում և կիսաանապատ դառուն և կլիմայի տեսակետից բնու-  
թագծվում և խիստ ցամաքային յեղանակներով, կիզիչ ամառով և ցուրտ  
ձմեռով: Ողերևութարանական դիտողութեւնների բացակայութեւնը հե-  
տադատվող շրջանի վերաբերմամբ թույլ և տալիս մեզ, նրա ջերմութեւն-  
ների բնույթի մասին հասկացողութեւն կազմելու համար, դիմել Ռուս-  
նովի նուսթերի մեջ պարունակվող տվյալներին, վոր վերաբերում են Յերեան  
քաղաքին (նշ 5): Միջին ամսական և տարեկան ջերմութեւնները դիտողու-  
թեւնների 20-ամյա ժամանակաշրջանում արտահայտվում են հետևյալ  
թվերով (ըստ С.)

|                     |       |
|---------------------|-------|
| Հունվար . . . . .   | — 6,4 |
| Փետրվար . . . . .   | — 3,3 |
| Մարտ . . . . .      | 4,7   |
| Ապրիլ . . . . .     | 12,2  |
| Մայիս . . . . .     | 17,5  |
| Հունիս . . . . .    | 22,3  |
| Հուլիս . . . . .    | 25,3  |
| Ոգոստոս . . . . .   | 25,2  |
| Սեպտեմբեր . . . . . | 20,1  |
| Հոկտեմբեր . . . . . | 14,1  |
| Նոյեմբեր . . . . .  | 6,0   |
| Դեկտեմբեր . . . . . | 0,2   |

Միջին տարեկանը՝ 11,5° (ըստ С.)

Միջին ջերմութեւնը վեղետացիոն ժամանակաշրջանի համար հալա-  
սար և 20,4°-ի, շոգ ամիսներին՝ 25,25°-ի, տարբերութեւնի ամպլիտու-  
դան ամենաբարձր միջին թվերից մինչև ամենացածր աստիճանները, ինչ-  
պես տեսնում ենք, շատ նշանավոր և և կազմում և 31,7°:

Համաձայն նույն տվյալների, տափաստանի մթնոլորտային տեղում-  
ների (осадки) քանակն աննշան և: Այսպես, Յերեանի համար միջին տա-  
րեկանը հալասար և 315 мм (դիտողութեւնների 6-ամյա ժամանակա-  
շրջանում): Նախիջևանի համար՝ 296 мм.: Այդ թվերից  $\frac{1}{3}$ -ն ընկնում և  
ապրիլ ու մայիս ամիսների վրա, իսկ հուլիս և ոգոստոս ամիսների տեղ ժամա-  
նակաշրջանում տեղում և ընդամենը 5-ից մինչև 8°/ս-ը: Ամսական տկնույթ-  
ների ամպլիտուդան յերկու հիշյալ կետերի համար ևս զբեթի հալասար և—  
Յերեանի համար՝ 46 мм., Նախիջևանի համար՝ 48 мм.: Այստեղից  
կարելի յի հետևցնել, վոր վերև բերված տվյալներն Արազդաշանի տա-  
փաստանի սահմաններում վորևե նշանավոր փոփոխութեւնների չեն յեն-  
թարկված և բնորոշ են նաև վերջինի համար: Մնացյալ կլիմայական աղ-



զականքից պետք է նշել տեղական բուք-քամիները, վորոնք առաջանում են շրջապատող սարականքների սառչելուց և արտահայտում իրենց ամենամեծ ուշմը ամառը, հետճաշյա ժամերին, այդ տեսակ քամիների ազդեցությունը, բացի նրա ներդրումից հողագոյացման տեղական պրոցեսների վրա, արտահայտվում է մի այլ տեսակ նա. ողորի նշանավոր քանակը այդ քամիները աղանդերի ճաշալ կզդիներէց» (СОЛОНЧАКОВЫЕ «ПЛЕШЕВЫ») տանում փոխադրում են հարեան հողամասերի վրա և այդպիսով հողի վերնախավերը աղատում աղերից:

Հողագոյացման ազդակներն մեջ վորոնք տեղի ունեն կամ ունեցել են անցյալում, նշանավոր դերը պատկանում է սեւեռնին, Մակերեույթի կազմվածքով Արազգոյանի տափաստանը մի մեծ, ներս կորացած հարթավայր և ներկայացնում, ամենացածր դիրքը զբաղում է նրա միջին շերտը, վորը մոտավորապես ձգվում է զլխավոր ցամաքեցնող կողմից ուղղությամբ, իբրեւ մի ահագին, խոր ընկած տարածութեան կամ ճեղք, ամբողջ տափաստանի յերկարութեամբ, իսկ արեւելյան մասը, վորը մերձենում է սարերին և արեւմտյանը, վորը Արաքսին և կցված, բնորոշվում են ավելի բարձր դիրքերով. ընդ ամեն արեւելյան մասի բարձրացումը արտահայտված է ավելի նկատելի կերպով, քան զետափյա մասին՝ տափաստանի վարեջքը դեպի հարավ, Արաքսի գուլընթաց, շատ աննշան և և 2 կիլոմետր տարածութեան վրա տալիս է մոտավորապես 1 մետր տարբերութեան:

Նկատի առնելով տափաստանի կազմվածքի բնույթը, նաև այժմյան հողային ծածկի կացութեանը, մենք այդ ծածկի ծագումն ու եվոլյուցիան կարող ենք ներկայացնել մի քանի ֆազերի (փուլերի) ձևով:

Նախնական ֆազան (փուլը) պիտի վերաբերի այն հեռավոր ժամանակներին, յերբ տափաստանի այժմյան տերրիտորիան Արաքսի ջրերի համար հուն և ծառայելիս յեղիւ Հետագայում, յերբ տամիլութեան սկսել է պահպանել և ջուրն աստիճանաբար հաստատվել է մի այլ, ավելի խոր, ավելի արեւմտյան (այժմյան) հունի մեջ, Արազգոյանի տափաստանը հանդիսացել է այսպիսով մի տեսակ հասակ կանգ առած կամ դանդաղ հոսող ջրերի համար Այս ժամանակաշրջանում հողածածկի վրա ամուր նրստում է պղտորված նյութը. միաժամանակ նրա խորը մասնիկները ծածկվում են յեղերը, իսկ ազդու մասնիկները տարվում են դեպի ճեղքա-յի միջին շերտը: Այս ժամանակաշրջանը նշելի յս իբրեւ ճահիճների գոյացման շրջան և, ըստ յերեույթին, դեռ մնում է մարդու հիշողութեան մեջ. այդ մասին վկայում է ինքնին Արազգոյանն անունը, վոր նշանակում է Արազի ճահիճը:

Հետագա ժամանակաշրջանները բնութագրվում են հողի հումիֆիկացիայով, ճահճային բուսականութեան ծագումով. Այդ մասին վկայում են մուգ (կապույտակիւն տվող սևագույն), ճահճոտ, աղմոտ հողերը, վորոնք դանդաղ են տափաստանի ավելի ցածր, ճեղքա- կոշվող մասում:

Լուծույթների կենտրոնացման աճումը և հետզհետե գոլորշիացումը կատարվում է գուլընթաց հողամասերի աղիացմանը՝ հեշտութեամբ լուծվելիք աղերի միջոցով:

Վերջապես, ժամանակակից եռապլը բնորոշվում է նրանով, վոր տափաստանի մի քանի մասերում դարգանում են հողի աղիացման յերևույթները: Հասկանալի չէ, վոր տեղավորման (saleranne) պայմանները, այսինքն՝ մակերև. և միկրո-ռելյեֆի բնույթը, անդրադարձել են այդ յերևու. պրոցեսներից մեկի կամ մյուսի տեղադրանության վրա (տափաստանի ցերեկվա մակերևութը ջրից ազատվելու ընդհանուր ընթացքում), այնպես և յուրաքանչյուր առանձին եռապլի, նաև ամբողջ ցիկլի գրանվորման լիակատարության վրա: Այդ տեսակ սխեման, սակայն, մի քիչ իդեալականացված է հանդիսանում, վորովհետև նա ի վիճակի չէ անհրաժեշտ ճշտությամբ հաշվի առնելու հողագոյացման դինամիկայի մեջ այնպիսի ելական աղբյուրներ, վորպիսիք են հողագրունների մեխանիկական կազմի տարբերությունը, ֆլուրան և առհասարակ նյութերի բազմատեսակ ֆիզիկական հատկությունները, — նյութեր, վորոնք ծառայել են հետազոտվող ջրածնի աղբյուր բազմատեսակ հողածածկի ձևավորման համար:

Վերջապես, այստեղ կատարվող հողագոյացման պրոցեսներում նշանավոր դործունեյություն է արտահայտվել և արտահայտվում է Արաքսի վարարուններով, նաև լեռնային առուների և Վեդի գետի հեղեղումներով (սելաֆներով): Դրան մենք ակնատես յեղանք 1927 թվի մայիս ամսին, յերբ այդ փոքրիկ գետակի հեղեղատը հասավ մինչև Արաղդոյանի տափաստանը և մեծ չափով հեղեղեց «Սերմանտես»-ի հողերը: Իսկ Արաղ գետի հեղեղումները, չնայած վոր նրա ափերը տափաստանի ամբողջ յերկարությամբ ամրացված են, տեղի յին ունենում զրեթի ամեն տարի և, տեղացիների ասելով, հեղեղում են գետափյա մասը մոտ կես կիլոմետր լայնությամբ. այստեղից կարելի չէ դատել, թե վորչափ ինտենսիվ է յեղել նրանց դործողությունը այն ժամանակ, յերբ գետի ափերը պատնեշներով զեռ չեյին ամրացված: Յերեք տեսակ են արտահայտվում վարարունների հետևանքները: Մի կողմից մակերեսի անհարթությունները փոքր ի շատ հարթվում են և ծածկվում հեղուկով՝ բրած նյութի խավերով. դրանով է բացատրվում այն փաստը, վոր Արաղ գետի մոտ դրած մեր բոլոր զրեթի կտրվածքներում վերտիկալ (ուղղաձիգ) պրոֆիլի մեջ 140 ս. խորությամբ կարելի չէ տեսնել իրար հաջորդող ավազի և տղմի մի քանի (իրար վրա դարսված) խավեր: Մյուս կողմից, ջրի այն մեծ քանակություններից, վոր հեղուկանի շնորհիվ մուտք են դործում տափաստանի մակերևութը, մի վորոշ մասը թափանցում է գրունտի (груды) ներսը, և վերնախափային ջրերի հորիզոնը բարձրանում է: Յեմ ապա, նկատի ունենալով տափաստանի աննշան թեցումը, հեղեղի ջրերը յերկար ժամանակ կանգ առնելով բացասական տարրերի վրա, ակտիվ կերպով սկսում են մասնակցել «աղահողերի» գոյացմանը:

Նույն ուղղությամբ են դործում նաև սելավի ջրերը:

Ներկայումս տափաստանի մակերևութը վերջնականապես ազատված է ջրից, սակայն նրանից զեռ առատ քանակություններ գոյություն ունեն շատ աննշան խորքերում, դրունտի մեջ և շարունակում են տիրապետող աղբյուրի դեր կատարել հողագոյացման յերևույթներում:

1913—14 թ. թ. Ռոմանովի կատարած ջրաբանական ախտատնքները հետազոտողին այն յեզրակացությանն են բերում, վոր այդ ջրերի աղբյուրներ են հանդիսանում նախ՝ Արաղ գետը, մյուս կողմից՝ նախալեռնային

մասի տուճներից ծաղող ջրերը: Հիշյալ հետազոտությունները ցույց տվին գրունտի (грунтовой) ջրերի և Արաղ գետի մեջ գոյություն ունեցող կախման պատկերը, ըստ վերում, յերկուսի մակարդակների տարբերումներն ևս գույադիպում են իրար. ընդ սմին ամենացայտուն կերպով այդ կախումը մենք տեսնում ենք գետափյա մասի հորերում (в скважинах):

Մենադուլնի վերելքի Արաղը հասնում է մարտ ամսից մինչև հունիսը. հենց այդ ժամանակաշրջանն է, վոր շնչովում է գրունտի ջրերի բարձր մակարդակով. Արաղ գետի ջրերի հորդացմանը գույադիցվում է նաև գրունտի ջրերի մակարդակի բարձրացումը, ընդ սմին այս վերջին յերևույթը տափաստանի հիշյալ մասի հորերում նկատվում է 7 որ անցնելուց հետո, իսկ Արաղի վալեհքը նկատվում էր 3 որվա միջոցում (հոր № 1):

Միևուրոտային տամկության ազդեցությունը գրունտի ջրի քանակությունների փոփոխումների վրա անշան է. այդ բացատրվում է հողի կալյա կամ սղմուս կազմերով, վորոնք, ինչպես հայտնի յե, սաստիկ տնթափանց են ջրի համար. այնպես վոր ջրի մակարդակների տարբերումները (տափաստանի զեթ այս մասում) պետք է վերագրվեն գլխավորապես Արաղի ազդեցությանը:

Ամենից մոտ մակերևույթին խավալները մերձենում են տափաստանի «հալալ»-ի ցածրացած մասում, իսկ ռելյեֆը բարձրանալու հափով նախալեռնային գետափյա մասերում իջնում են, տեղ-տեղ մինչև 2 և ավելի մետրը:

Մեր ունեցած սակավաթիվ տվյալները խավալների խորության աստիճանի մասին լիովին հաստատում են հիշյալ տեղեկությունները:

Մի փոքր տարբերություն ցույց են տալիս «Սերմտնտեսի» (СЕМХОЗ) հորդամասի խավալների վերաբերյալ մեր տրամադրության տակ գտնվող քիմիական վերլուծման տվյալները: Ինչպես տեսնում ենք ստորև բերված աղյուսակից, աղերի կենտրոնացումը նկարագրվող հորդամասի խավալների մեջ դանաղան կիտերի համար տարբեր է, Հանքային մնացորդի մեծացումն քանակը պարունակում է շուրթ IX—31.19: Յերկու անգամ պակաս թվեր են ընկնում 42-րդ կտրվածքի և V շուրթի վրա, իսկ ամենապակասը ցույց են տալիս 46-րդ և 51-րդ կտրվածքները և VIII շուրթը:

«Արաղգայան» սերմենաստվյան (СЕМХОЗ) հոգամասի ցեռային ջրերի քիմիական անալիզի օվյալները.

| Շուրթի և կտրվածքի № | Ջրի գույնը         | Համը            | Ըստ տվյալների |                     | Դրամմերով 1 լիտրին |                 |             |                     |                  |  |  |
|---------------------|--------------------|-----------------|---------------|---------------------|--------------------|-----------------|-------------|---------------------|------------------|--|--|
|                     |                    |                 | Աղաթուսթյուն  | Կաթուրյուն (Ca, Mg) | Cl                 | SO <sub>3</sub> | Չոր մնացորդ | Ուղամանակն յուր մեք | Հանքային մնացորդ |  |  |
| № 42                | Թափանցիկ           | Աղի             | 22,63         | 59,93               | 26,36              | 6,16            | 16,57       | 2,39                | 14,18            |  |  |
| № 46                | Բաց-դեղին          | Քաղցր թույլ     | 21,64         | 31,40               | 0,83               | 0,71            | 2,84        | 0,82                | 2,02             |  |  |
| № 51                | »                  | Մի բեշ աղի դառն | 30,7          | 9,03                | 0,19               | 0,35            | 3,14        | 0,70                | 2,44             |  |  |
| V                   | Դեղնուս            | Մի բեշ աղի      | 51,16         | 32,50               | 1,94               | 5,78            | 15,86       | 0,56                | 15,30            |  |  |
| VI                  | Թափանցիկ           | »               | 21,64         | 38,18               | 1,45               | 2,89            | 8,58        | 0,48                | 8,10             |  |  |
| VIII                | »                  | Քաղցր           | 21,64         | 21,65               | 0,19               | 0,90            | 2,02        | 0,35                | 1,67             |  |  |
| IX                  | Կանաչին տվող դեղին | Դառն-մի բեշ աղի | 32,86         | 25,67               | 11,6               | 5,97            | 32,12       | 0,93                | 31,19            |  |  |

Աղերի քանակութեան բաշխման բնույթն ակնհերե կերպով վկայում է այն մասին, Վոր խավաջրի կենտրոնացումը բնավ չի կախված տվյալ կենտրոնացումից: Արագ դետի վերաբերյալ, Իսկապես, Արագին աղիքի մոտ գտնվող հողամասերի այն ջրերը, Վոր մենք վերլուծել ենք (շուրճի V, շուրճի IX և № 51 կտրվածքը), ցույց են տալիս աղերի ամենատարբեր քանակները՝ 32,12 գրամ, 15,86 գր. և 2,14 գր., նույնչափ տարբեր բնույթ են կրում և Ռոմանովի տվյալները նույն մասի ջրերի վերաբերմամբ:

|          |       |   |    |
|----------|-------|---|----|
| Նոր № 1— | 3,17  | } | *) |
| » » 11—  | 6,44  |   |    |
| » » 12—  | 38,78 |   |    |
| » » 13—  | 4,41  |   |    |

Կարելի չէ տեսնել, Վոր № 1 հորի ջուրն աղերի քանակով մերձենում է № 51 կտրվածքի ջրին, նաև Վոր № 12 հորը նման է IX շուրճին, մինչդեռ նրանց մեջ տարբերությունը շատ նշանավոր է:

Նույնը պետք է ասել նաև աղերի վերակային կազմի մասին: V շուրճի ջրի վերլուծումը ցույց է տալիս, Վոր վերոհիշյալ տվյալները լիովին չեն համապատասխանում նախկին հետազոտությունում հաստատված այն դրությունը, Վոր իբր թե «կենտրոնական հորերը, զուրկ լինելով բարձր ալկալիտությունից, տալիս են ծծմբաթթու աղերի գրեթե հավասար քանակներ, իսկ արագդրյա հորերը առատ են քլորիդ աղերով և բարձր ալկալիտությունով»: Արագդրյա V և IX շուրճերը, իսկապես, բնորոշվում են բարձր ալկալիտությունով, սակայն քլորիդներով «առատ» է միայն IX շուրճը, մինչդեռ Արագին աղիքի մոտ տեղավորված V շուրճի մեջ սուլֆատները գերադասում են քլորիդներին գրեթե 3 անգամ: Մնացյալ շուրճերի և կտրվածքների մեջ թե՛ ընդարազյա, թե՛ միջին շերտում ծծմբաղերը գերակշռում են քլորաղերից 1,55—2,33 անգամ: Ավելի ցայտուն կերպով աչքի չի զարնում խավաջրերի քիմիական կազմերի տարբերության շեղումները, յիշել համեմատությունն ենք դնում № 42 կտրվածքի, № 46 կտրվածքի, VI շուրճի և Ռոմանովի 3-րդ հորի վերաբերյալ վերլուծման տվյալները: Հիշյալ կետերը համեմատաբար փոքր տարածության վրա չեն տեղավորված մեկը մյուսից, բայց անկախ դրանից, նրանց մեջ վոչ պակաս տարբեր են թե՛ հանքային ֆազորդի քանակները (№ 42—14,18 գր., № 46—2,012 գր., VI շուրճի—8,10 գր., հոր 3-րդ—4,034 գր.) և թե՛ ծծմբաղերի քանակները (№ 42—6,16, № 46—0,718, VI շուրճի—2,89, հոր 3-րդ—1,22):

Արդեն իսկ այս սակավաթիվ տվյալների հիման վրա կարելի չէ դատել, Վոր Արագդյանի տափաստանի խավաջրերը քիմիական կազմի տեսակետից այնչափ բազմառեսակ են, Վոր խոսել այն ընդհանուր գծերի մասին, վորոնք հատուկ են բացառապես տափաստանի բարձր կամ ցածր մասերին, ներկայումս մեր տրամադրությունն առաջ գտնվող տվյալների հիման վրա, մի քիչ վաղաժամ է մեզ թվում:


Այդ բազմատեսակությունը պայմանավորված է խավաջրերի ընդհանուր ռեժիմի ամենատարբեր ազդակների ազդեցությամբ՝ տեղավորման

\*) Ռոմանովի հիշյալ զերքը, էջ 55:

(запегание) պայմաններով, շրջանի կլիմայական առանձնահատկություններով, ջրի շարժման ուղղությունը և արագությունը, այդ ջրերին հաղորդող հողախաղվերի միխանքական և ֆիզիքական հատկություններով, բուսական ծածկի բնույթով և այլն: Յեւ չենք այս բազմատեսակությունն և, վորը իր հերթին կանխորոշում և հողի ճանաչման և աղիացման պրոցեսների բնույթն և ուղղությունը, ուստի և զոյանում և հետագուոված շրջանում հողածածկի մեծ բազմաբնույթությունը:

Հաստատելով այսպես, վոր Արագոյայանի տափաստանի հողածածկը կազմվում և բուրք վերոնշյալ ազդակների և նրանց կոմբինացիաների ֆունկցիոնալ գործունեությունից, մենք այնուամենայնիվ պիտի ընդունենք, վոր դրանց մեջ գերակշռող դերերը պատկանում են տեղավորման (запегание) պայմաններին (մակրո և միկրո-ռելյեֆ), մեխանիքական կազմին և վնչ ուղղակի կերպով վերնախավի ջրերին:

Փորձենք մոտից քննել այդ կախումը, տալով այստեղ տափաստանի սրեմատերիկ պրոֆիլը ըստ լայնության և նրա նկարագրերը:



Պրոֆիլն ընդգրկում և մոտ 6 կիլոմետր տարածությամբ գիծ—Այջա գյուղից մինչև Արագը, անցնելով Իսփահան գյուղի ավերակների մոտով և հեռանալով նրանցից 200 մետր դեպի հյուսիս: Այջա գյուղի դիմաց, Արագոյայան ջրանցքի աջ կողմը դրված և Ք 6 կտրվածքը, վնչ հեռու գյուղի բամբակի արտերից, վորոնք տարածվում են ջրանցքի ձախ կողմով մինչև յերկաթուղու գիծը և ծածկված են շատ լավ շուշան բամբակով: Կտրվածքը ցույց և տալիս ճանաչող մարզի տիպի բաց գույնի հող. ճանաչման հատկանիշները նրա մեջ շատ թույլ կերպով են արտահայտված և ներկայացված են միայն հազվագյուտ կիսանիստված բուսականության մնացորդներով: հողը մի քիչ տամկացած և մակերևույթից արդեն 9 սանտիմետրի վրա. B հորիզոնը բնորոշվում և պարզ ընկուզային կազմությամբ:

Մի 400—500 քայլ կտրվածքից անց սկսվում և մուգ հումուսագույն ճանաչող հողերի մի շերտ, վորոնք խիա յեղեգնով են ծածկված: Այստեղ կատարված թեթև պեղումը ցույց և տալիս վերնախավի մուգ-գորշ, գրեթե սև, թուխ, կապույտին տվող գույնը. վերնախավը (վերնից) անորոշ, ընկուզային և, ճիմերով, ասես՝ ծածկված, տամուկ և կավե: Այդ հողերի շրջանում մեր մարդուտի գծով պատահեցինք յերկու շքայալ՝ կղզիանման



չկալած, նրանից ցած՝ Թանձր, անկալմ խալ, նույնչափ մուգ, վորի 8—10 սմ. խորութեան վրա կուտակված են աղեր—ճերմակ յերակներով։ Այդ տեսակ մուգ գույնի հողեր բաղձաթիւ չեն Արագի ուղղութեամբ։ Նրանք նույնչափ հանկարծակի յեն չքանում, ինչպէս և յերևում։ Դիմելով պրոֆիլին, կարելի չէ տեսնել, վոր ռելիեֆի կողմից այդ հողերը տափաստանի ամենացածր մասն են զբաղում։ Հագիւմ նշմարելի սկզբնական վերելքով, վորն աստիճանաբար տանում և ղեպի Արագը, նրանք փոխարինվում են ճահճա-մարգային սողահողերի և ճահճա-մարգային աղահողերի սերտ կոմպլեքսով։ Փորփոշ աղահողերը (կարմածք № 8 և № 15) նաև ճահճա-մարգա-աղային հողերը մեծ նասամբ անկալմ են (շատ սակաւ ղեպքում՝ խորտուրտ)։ Ընդ սմին, իբրև ընդուն հատկանիշ, հանդես և գալիս նրանց ավազոտ կամ կալ-ավազային միջանկիւղան կաղմը. աղահողերը ըստ մակրո-ռելիեֆի կապված են ավելի ցածր մասերին, իսկ ըստ միկրո-ռելիեֆի նրանք զբաղում են վերամարմ գերքերը և հաճախ իրենց հերթին կոմպլեքսութուն են գոյացնում իրենցից արտադրված ձևի հետ, այն է՝ տակիրային աղահողի հետ (такыристый солончак), վորին փքուն աղային հողամասերում պատկանում են միկրո-ռելիեֆի գրեթե ըլուր բացասական տարրերը։ Ճահճա-մարգային աղահողերի մեջ ընկուզանման սարուկտուրան նույնպէս չքանում և, տեղի տալով պրիզմաձև B հորիզոնին։

Անցնելով ճանապարհը, վորը միացնում և «Մոռ»-ի և «Արագայան»-ի սահմանակից պահականոցները, տեղ-տեղ տեսնում ենք «շոռ»-եր։ Նրանք այստեղ քիչ են տարածված և տեղավորման (залегание) հիմնական բնույթ են կրում։ Շոռերի հողամասերն ակներև կերպով տարբերվում են շրջապատող հրապարակներից նրանով, վոր իրենց հողը 60—70 սմ. խորութեան վրա ճաքած և։ Մակերևույթից նրանք փխրուն են և չոր։ Իսփառան գլուղի ավերակներից վոչ հետու տեղավորված № 16 կարմածքը պրոֆիլում ցույց և տալիս Թիպիկ «շոռ», վորը 6—67 սմ. խորութեան վրա ամուր գուղձային պրիզմաձև B հորիզոն ունի։ Դյուղից դուրս մինչև Արագը տարածվում և յեղեղով ծածկված ճահճա-մարգային հողերի մի շերտ. այդ յեղեղը (կամ այլապէս շամբի) այստեղ այնչափ բարձր և խիտ և բուսած, վոր գոյացնում և մի անընդհատ, հաղիւմ անցանիկ տարածութուն, վորտեղ ձիավորն իսկ անտեսանելի չէ դառնում։ Շամբու այդ թափուտների մեջ շինված կիսափոսը յերևան և հանում նորից վերին ճիւղաշատ խալի (0,15 սմ.) մասը ընկուզանման կաղմածքը (Струтур),—խալը առատ և կիսանելոված բույսերի բազմաթիւ սեացած մնացորդներով։

Բաժականանալով առայժմ միակ այս պրոֆիլի նկարագրով, կալեւացնենք, վոր մեր մյուս, ըստ լայնութեան (поперечный) կատարած մարշրուտը, վորը Արագայան կայարանից տանում և ղեպի Արագը, գրեթե նույն պատկերն և տալիս։

Ի վերջո, պրոֆիլները ուսումնասիրութեանը լուսաբանում և տափաստանի ռելիեֆի դերը՝ դանադան հողային գոյացումների բաշխման և տարածման տեսակետից և հնարավորութուն և տալիս ընդգծելու յերեք՝ ըստ ռելիեֆի տեղավորվող և ծագումով անկախ հողային խալեր, վորոնցից յուրա-

բանչյուրը պարփակում է իր մեջ ճանճոտ, աղային և սողախառն աղեր, վորոնք հաճախ իրար հետ խառնված են, դոյացնելով մի խիտ կոմպլեքս՝ Բացի այդ, մեր ուսումնասիրությունը զգալիորեն հեշտացնում է կլասիֆիկացիայի ժամանակ մի քանի ընդհանուր հատկանիշների (որինակ՝ ներկվածք) մեկնաբանությունն, վորոնք հատուկ են հողերի միջանի խմբավորություններին և կախում ունեն այն հանգամանքից, թե արդյոք հետադուրված շրջանի վեր մասումն է տեղավորած այս կամ այն հողամասը:

Հասկանալի չէ, վոր Արագղայանի տափաստանի հողերի կլասիֆիկացիան, վորը առաջարկում է Ռոմանովը, թեև բավականաչափ լույս է սրբում շրջանի վրա նրա հողածածկի սխանիկական կազմի տեսակետից, սակայն չի կարող կիրառվել ներկա դեպքում, նախ վորովհետև մեխանիկական կազմը չի կարող ընդունվել իբր միակ ղեկավար հատկանիշ հետադուրվող շրջանի հողագոյացումների կլասիֆիկացիայի ժամանակ, մասնավոր, վոր այդ շրջանը ներկայացնում է մի խառնաբխ կոմպլեքսային ծածկ, ուստի բնավ չի արտահայտում այդ գոյացումների խսկական բնությունը, և առավել եւ՝ զարգիար չի տալիս նրանց մեջ կենսագործվող հողագոյացուցիչ պրոցեսների բնույթի մասին: Իրոք, չե՞ վոր «Բոլոմոտ» հողը կարող է աղիանալ զանազան աստիճաններով և ըստ այնմ աղիացման բնույթը կարող է արտահայտվել թե՛ աղահողերի, թե՛ սողավուն և թե՛ հողերի հատկանիշներով: մյուս կողմից՝ «բոլոմոտ» հողը կարող է լինել թե՛ ճանճոտ, թե՛ ճանճա-մարդային, և վերջապես նա կարող է ներկայացված լինել բազմատեսակ, թե՛ աղիացած և թե՛ ճանճացած հողերի հատկանիշների կոմբինացիաներով: Մատնանշելով, ուրեմն, վոր կլասիֆիկացիայի ժամանակ իբրև հիմք չի կարելի ընդունել վորևէ մեկ հատկանիշ, Արագղայան տափաստանի ներկա նախնական հետադուրման հետևանքները միաժամանակ մեզ հնարավորություն են տալիս առաջարկելու շրջանի հողագոյացումների վերաբերմամբ հետևյալ կլասիֆիկացիան, վորի կառուցման փորձը հիմնվում է մի շարք առանձնահատուկ և իրարից տարբեր մորֆոլոգիական հատկանիշների և նրանց կոմբինացիաների դաշտային և կամերալ ուսումնասիրությունների վրա (Տե՛ս աղյուս. եջ 16):

Ինչպես յերևում է այդ աղյուսակից, մեր կողմից առանձնապես շեշտված յերեք շերտերը բնութագրվում են գոյացումների 3 համանման շարքերով, վորոնք ձևավորվում են վերնախավի առատ տաակացման պայմաններում (բացառյալ Արազի ավազոտ և Սադարակի նեխվածքները) և տեսաբանորեն մտածելի չեն վորպես հետևողական (վերտիկալ կարգով նըշելիս) փուլեր Արագղայանի հողագոյացումների պրոցեսների զարգացման մեջ: Ահմերքելի մորֆոլոգիական ապացույց այն գենետիկ կապակցությունը, վորը գոյություն ունի հիշյալ գոյացումների յուրաքանչյուր շարքի մեջ, հանդիսանում է այն պարագան, վոր ծայրի յերկու խմբերին ել՝ թե՛ ճանճոտ և ճանճա-մարդային, և թե՛ սողահողերին հատուկ է միևնույն հատկանիշը՝ ընկուզանման կազմվածքը (структура): Այդ հետևողականությունը ճանճոտ հողերից սկսած մինչև սողահողերը կարող է արտահայտ-

| A. — Ըճղաբազմաբան մասի հոգները                                           | B. — Ճաշալի ցածր մասի հոգները                    | C. — Կախալեռնային բան մասի հոգները                                                  |
|--------------------------------------------------------------------------|--------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------|
| 1. Ճանճա-մարդային (մը-շակույթից կազմաւուծ-ված деформированные культурой) | 1. Ճանճային, մուգ գլե-յափոր (темные, глее-ватые) | 1. Ճանճա-մարդային (մը-շակույթից կազմաւուծ-ված)                                      |
| 2. Ճանճա-մարդա-շոռային                                                   | 2. Ճանճա-շոռային                                 | —                                                                                   |
| 3. Ճանճա-մարդային թույլ սողախառն (болотно-луговые солонцеватые)          | 3. Ճանճային թույլ սո-ղախառն                      | 3. Ճանճա-մարդային, թույլ սողախառն                                                   |
| 4. Փորփոշ աղանոց (пых-лые)                                               | 4. Փորփոշ աղանոց                                 | 4. Փորփոշ աղանոց                                                                    |
| 5. Աղանոցեր տակիրոտ (такыристые)                                         | 5. Աղանոցեր տակիրոտ                              | —                                                                                   |
| 6. Սողախառն աղանոցեր (солончаки солонцо-вые)                             | 6. Սյունաձև աղանոցեր                             | —                                                                                   |
| 7. Պրիզմաձև աղանոցեր (солонцы призматиче-ские)                           | 7. Սյունաձև աղանոցեր                             | —                                                                                   |
| 8. Արագ գետի ավազոտ նետվածքներ (выносы)                                  | —                                                | 8. Կունաձև պրոլուվիալ նետվածքների վրա նետված և չգորգացած հոգեր (Սաղարակի նետ-վածք): |

վել թե մորֆոլոգիական, թե քիմիական կողմերից այնչափ բաղժատեսակ և զգվար ըմբռնելի փոխանցումներով, վոր մատնանշել, թե վորտեղ և վերջանում մի խումբը և սկսվում մյուսը, առայժմ բնավ հնարավոր չէ։ Միաժամանակ, սակայն, վորոշ կերպով արտահայտված հատկանիշների ընդ-հանուր գումարը հնարավորություն է տալիս առանց մի առանձին զըծ-վարության նշմարել, թե այդ հետևողական շարքի վոր փուլի մեջն և գտնվում այս կամ այն հոգը, վորն ըստ այնմ ստանում և և իր անունը։


Ամենալրիվ կերպով այդ փոխանցումները մենք նշել ենք ընդարաքո-յան բարձր մասի մեջ, Իսկ այն հանգամանքը, վոր մի քանի համաման գոյացումներ պակասում են մնացյալ յերկու շերտերի մեջ, բացատրվում է նրանով, վոր նախնական դաշտային հետադուռությունները կատարվել են վոչ բավարար մանրամասնությամբ։ Պետք է կարծել, վոր հետագա աշխա-տանքներում վոչ միայն կլրացվեն բացակայող փուլերը, այլ և հնարավո-րություն կլինի լայնացնելու յուրաքանչյուր շարքը հիմնարկելով լրացու-ցիչ անցողական ձևերը։

Նույն պատճառով, այսինքն՝ բավականաչափ տվյալների բացակա-

յության շնորհիվ, նաև ցանկանալով խույս տալ Հափազանց խայտաբե-  
տությունից Արարդայանի հողային քարտեղը կազմելիս (վորը կցվում է  
այս հողվածին), ավելի հարմար գտանք ցույց տալ բոլոր յերեք շերտերից  
մի քանի գոյացումներ (որինակ՝ մի շարք սողահողեր և աղահողեր) միատե-  
սակ անուններով տակ:

Այն հանգամանքը, վոր ռեյեֆին հետևող, ծաղման տեսակներից  
(դենտոիդներն) տարբեր յերեք շերտերը առանձնացված են, նշանակում է,  
վոր տափաստանի հողածածկի ձևավորման սկզբնական (յեղակետային,  
исходные) փուլերը պետք է ներկայացված լինեն ծաղումով տարբերվող  
ուղղություններով: Հենց մի ուղղությամբ ձևավորվում են մուգ, գլեյա-  
նման (глееватые) ճահճոտ հողերը, վորոնք գտնվում են տափաստանի  
ճակատի ցածր մասում, իսկ մյուս կողմից ավելի բարձր (բոտ ռեյեֆին  
մասերում մենք՝ դիտում ենք բաց գույնի ճահճա-մարգային հողերի գոյա-  
ցումը: Այդ յերկուսի դենտոիդ տարբերությունը կարող է ընդհատվել  
նրանով, վոր մինչդեռ առաջինները, տափաստանի մակերևույթը ջրից ա-  
ղաավելիուց հետո, ձևավորվում էյին անխախտ պայմաններում, վորոնք  
նպաստում էյին հումուսի կուտակմանը, գլեյի (глей) գոյացմանը և, ու-  
րեմի, հողային հորիզոնների դիֆֆերենցիացիային, նույն պայմանները  
տախաստանի այն մասում, վորն ավելի մոտ է գտնվում Արաղ գետին,  
խախտվում էյին թիկուղ լոկ մեխանիկորեն ամեն անգամ, յերբ տեղի յեր  
ռենում գետի վարարումը և հեղեղվում այդ մասը, վորի հետևանքով  
մենք գտնում ենք այստեղ ճահճա-մարգային հողերի տիպարը: Այդ ճահ-  
ճա-մարգային հողերը ներկայացված են արդեն վերակիալ պրոֆիլով վոչ  
իե դենտոիդներն ձևակերպված հորիզոններով, այլ տվադի և տոյմի մի քա-  
նի փոխանցող խափերով (ряд переслоев), վորոնք միաժամանակ վկայում  
են նաև այդ հողերի բերովի լինելը: Այդ հողերը, այսպիսով, տարբերվում  
են վերոխիշյալ ճահճոտ հողերից նրանով, վոր նրանց մեջ բացակայում են  
ճահճատեսակ հողերի գոյացման հիմնական քիմիական և մորֆոլոգիական  
զծերը (գլեյ, հումուսի առատ բովանդակություն և այլն), բայց և միաժա-  
մանակ վկայում են, վոր պատկանում են վերջին (ճմարգային) տերմինով  
մի քիչ մեղմացված) տիպարին՝ շնորհիվ ժանդոտ յեղակների թթվացուցիչ  
պրոցեսների հատկանիշների ներգոյությունը և բուսականության կիսա-  
ներված ավազած մնացորդների ներկայությունը: Իսկ բարձր նախալեռ-  
նային շերտում, վորտեղ գոյություն ունի բնական անջրդիացումը և ջը-  
րերը առնասարակ յերկրառատ և մնալ չեն կարող վոչ մակերևույթի, վոչ ել  
զրույտների մեջ, ճահճացման ընույթն արտահայտված և ստիպել նկատելի  
կերպով: զրան նպաստում է նաև այն հանգամանքը, վոր այս մասում  
հողերը մշտապես մշակվում են գյուղատնտեսական նպատակներով:

Ինչպես արդեն վերև հիշեցինք, բոլոր յերեք շերտերն հոգս-գոյա-  
ցումների յեղակետային ձևերը համանման կերպով են կատարում իրենց  
եվոլյուցիան. և նրանց՝ վիճակվող կերպարափոխությունների մեջ վրճ-  
ոողական զեր և ստանում, բոտ յերևույթին, հողի միախառնական կազմը:  
Մեղ հաջողվել է նկատել այդ հետաքրքիր կախումը դեռ այն պահուն,  
յերբ մենք ուսումնասիրում էյինք Վերմոնտս-ի (Вермонт) հողամասի  
խափերը: Նավերի մեխանիկական կազմի բնույթի տեսակետից հիշյալ





հողամասի հողային կտրվածքները 4 խմբի ելին բաժանված. Առաջին խմբի մեջ մտած են այն կտրվածքները, վորտեղ մոտ 24 մ. խորության մեջ հայտարկված են ավազոտ և կավա — ավազային (суглиняные) խավեր, վորոնք տևում են մինչև 60—65 մ., 2-րդ խումբը ներկայացնում են այն կտրվածքները, վորտեղ 70 սանտիմետրից ցածր են գտնվում ավազոտ և կավա-ավազային խավերը, 3-րդ խմբի կտրվածքների մեջ ավազոտ նյութից են կազմված մակերևույթի խավերը մինչև 25 մ. խորությունը. վերջապես, 4-րդ խումբը բնորոշում են կտրվածքները, վորոնք պրոֆիլի ամբողջ խորությամբ (100—150 մ.) ներկայացված են կավի կազմով: Հետագայ դիտողությունները ցույց տվին, վոր բոլոր 4 խմբերում տեղի ունեն միայն ճահճա-մարգային հողերը, սակայն նրանք ամենից սակավ են 3-րդ խմբի մեջ, վորովհետև դրա խավերի դասավորումը պակաս նըպաստավոր են հողի մեջ տամկություն պահպանելու տեսակետից, Աղահողերի ձևերի (փոքրոշ տակիրային ճահճա-մարգային աղային) գոյացմանն ամենից շատ նպաստում են I և II խմբերը, վորոնց մեջ նյութի տեղավորման կարգը (վերևի մասը հատիկներից մինչև ներքևի խոշոր հատիկները) մեծացնում և կապիլլար վերելքի բարձրությունն ու արագությունը: Աղային (солоноватый) բնութի հողերը մեծ մասամբ վերաբերում են 3-րդ և 4-րդ խմբերին և սակավ զեպքերում՝ 2-րդ խմբին և լիովին բացակայում են առաջին խմբի մեջ, այսինքն՝ ինչպես և պիտք եր կարծել, նրանց ներկայությունը բոլոր դեպքերում հորիզոն B-ի կավի կազմով և պայմանավորված, Իսկ բոլահողերը արտահայտված են կավի մասնիկների մաքսիմալ բովանդակությամբ, Այդ հանգամանքը ակներև կերպով լուսաբանում են հիշյալ հողամասի կտրվածքների մեխանիկական կազմի վերաբերյալ այն վերլուծումները, վոր մենք այստեղ առաջ ենք բերում:

Ներկա նախնական դաշտային հետազոտությունը նույնպես հաստատում է այս դիտողությունները այն մասում, վորը առընչություն ունի աղահողերի գոյացման մեջ մեխանիկական կազմի ունեցած դերի հետ և ցույց է տալիս, վոր բոլոր մեր հանդիպած աղահողերը (կտրվածքներ № № 3, 15, 23 և 11 հ.) կազմվում են ավազից և կավաավազից:

Յեթն ցանկություն ունենալով ավելի մանրամասն ներկայացնել մեզ Արաղդայան տափաստանի առանձին-առանձին հողագոյացությունների միտամորֆոզի (կերպարանափոխության) կարգը, հողի մեխանիկական կազմի դերը մենք տեսարանորեն ավելի մոտից կարող ենք դիտել: Այսինքն, յեթն ճահճոտ կամ ճահճա-մարգային հողերը, իբրև հողագոյացման արտահայտության առաջին փուլ, ձևավորվում են այն դեպքում, յերբ ներկայի մեխանիկական նյութի բաշխման պայմաններից յուրաքանչյուրը, վոր մենք նշեցինք «Սերմնատես»-ը (сѣмхоз) հետազոտելիս, ապա ուրեմն աղահողերի գոյացումը, այսինքն՝ դյուրավույժ աղերի միջոցով կատարվող աստիճանական աղիացումը, իբրև առաջին փուլին հետևող եվլյուցիայի մի յերկրորդ և անխուսափելի աստիճան, պիտի տեղի ունենա նույն պայմանների մեջ, սակայն, իրենց հետագա զարգացման մեջ ճահճա-աղային և ճահճա-մարգա-աղահողերը կարող են, ըստ յերևույթի, ստանալ 2 ուղղություն: Դրանցից մեկը, վորը կենսագործվում է հեշտ





վերին հորիզոններում արդեն ազատ ե այդ աղբրից: Մի այլ ուղղությամբ աղայնոտության փուլը (фаза солонцеватости) հասնում է, անշուշտ, անմիջականորեն, առանց այդ հաջորդական փուլերի, և իր արտահայտությունն է գտնում ճանճային թույլ սողախառն (болоотно-солонцеватый) հողերի և ճանճա-մարգային թույլ սողախառն հողերի գոյացման մեջ. այս դեպքում աղահողերի կլանող կոմպլեքսի նաարիումով հագեցնելու աստիճանը, ըստ յերևույթին, բավական է, վոր գոյանան սողային միջմալ քանակները և В հորիզոնի պրիզմաձևությունը և աննշան սեղմվածությունը:

Հասկանալի չէ, վոր աղահողերի այս կամ այն ճյուղավորման նպատող պայմանները կարող են արտահայտվել աղղակների ամենարագմատեակ կոմբինացիաներով, ուստի փոքր ի շատե վորոշ ձևով նշել այդ պայմանները առայժմ դժվար է: Կարելի չէ, սակայն, յենթադրաբար խոսել աղահողերի մեխանիկական կազմի ունեցած աղղեցության մասին այս պրոցեսներում: Աղահողերի ավազոտության բարձրանալու պահուն այդ պրոցեսներն ուղղվում են, զլխավորապես, դեպի առաջին կողմը, այդ սինքն՝ դեպի աղազոյացումը և այլն, վորովհետև նրանց կլանող կոմպլեքսը, թեև կարող է պարունակել իր մեջ հաղեցված նաարիում, սակայն զուրկ կլինի բավարար դիսպերսությունից, վորպեսզի կարողանա գոյացնել փոքր ի շատե նշանավոր չափով սեղմվածություն և կազմվածք (уплотненность и структуру). այս դեպքում սողահողերի (солончи) գոյացումը պիտի կատարվի ավելի զանգաղ, վորովհետև մի կողմից սողային գոյացմանը կխանգարի քլորիդ և ծծմբաթթու նաարիումը, իսկ մյուս կողմից՝ կլանված նաարիումի դերը կկայանա նրանում, վոր նա կփոշիացնի (распыление) կլանող կոմպլեքսը, բարձրացնելով հողի կոլորիդալությունը. այս պրոցեսի համար, պետք է կարծել՝ մի վորոշ ժամանակամիջոց և հարկավոր:

Յեթե աղահողերը կավե կազմ ունեն, մենք իրավունք ունենք յենթադրելու դիսպերսություն մեծ աստիճանը լինելը, ուստի կլանված նաարիումի ներկայությունը, նույնիսկ աննշան քանակներով, ավելի հաջող աղղեցություն կանի փոքրիկ սեղմվածություն և բնորոշ կազմվածքի գոյացման վրա. այս դեպքում, բնական է, սողազոյացման փուլը (фаза солонцеватости) կարող է ժորֆոլոպիորեն հասնել՝ ավելի վաղ և ընդ մին նախնական տիպարի պարզորոշ գծերով հանդերձ (ճանճային կամ ճանճա-մարգային) իսկ այս դեպքում դոյացող սողախառն հողերի (солонцеватых почв) կլանող կոմպլեքսի հաղեցման աստիճանը կլանված նաարիումով, այսինքն, այդ հողերի սողախառնություն աստիճանը իջեցված է, վորովհետև, յերբ նրանց մեջ կապիլլար վերելքը դադարում է կամ, ավելի ճիշտ՝ մեծ չափով թուլանում է, — մեծ չափով իջնում են նաև այդ նաարիումի սեփական աղբյուրները՝ քլորիդ և ծծմբաթթու նաարիումը:

Արագղայան տափաստանի հողազոյացման պրոցեսների ուղղությունների բնույթի մասին մեր այս հայանած կարծիքի համաձայն (կարծիք, վորն, ի դեպ ասած, ղուտ յենթադրական է) տափաստանի հողածածկի եվուլյուցիայի սխեման կարելի չէ ներկայացնել հետևյալ ձևով. —

ԱՐԱՋԴԱՅԱՆԻ ՏԱՓԱՍՏԱՆԻ ՀՈՂԱՍՄԵՄԻ ԵՒ ԼՈՒՅՈՒՑԻԱՅԻ ՍՔԵՄԸ  
 Схема эволюции почвенного покрова Араздаянской степи

Ճահճա-մարգային  
 Болотно-луговые

Մշակույթից կաղմալուծված  
 Деформированные культурой

Ճահճա-մարգային աղահողեր՝

Болотно-луговые солончаковые:

ա) Ալպաղա-կավային

բ) Կավային

а) Супестанные

б) Глинистые

Աղահող փոքրիկ

Солончаки пухлые

Աղահող թակիրային

Солончаки такыристые

Աղահող թույլ սոդախառն

Солончаки солонцевые

Ճահճա-մարգային —

թույլ սոդախառն

Болотно-луговые

Солонцеватые

Սոդախառն հողեր Սолонцы

?

Բերված աղյուսակը պատկերացնում է միայն այն սքեման, վերով կարելի չէ բացատրել, թե ինչպես հողի մի տեսակն աստիճանաբար փոխանցվում է մյուսին: Տափաստանի ավելի մանրամասն հետազոտությունները, վոր ծրագրվում է կատարել մոտ ապագայում, հնարավորություն կտան ընդարձակել վերոհիշյալ սքեման և կառուցել հողերի ավելի մանրամասն կարգաբանությունը, նկատի ունենալով գրությունների բնույթը և տեղական բնույթի մի շարք գործոնները:

Այդ նպատակի համար շատ հետաքրքրական կլինի հաշվի առնել նաև հողերի բնույթի փոփոխությունը տարվա ցիկլի ընթացքում: Այս ուղղությամբ առանձին տեղեկություններ՝ կապված տափաստանի բուսականության ուսումնասիրություն հետ՝ մենք արդեն կատարել ենք աղահողերի նկատմամբ: Այս գիտողությունները մենք կհրապարակենք Արադայան տափաստանին նվիրված մեր հաջորդ աշխատության մեջ:

Ընդարազյան բարձր շերտի հողերի եվոլյուցիայի մեր այս դեպքում ցույց տված սխեման կարող է կիրառվել ֆնացյալ յերկու շերտերի վերաբերմամբ:

Անցնենք Արազգայան տափաստանում տեղի ունեցող հողագոյացումների մորֆոլոգիական բնութագրությանը:

### ՃԱՂՃԱՅԻՆ ՅԵՎ ՃԱՂՃԱ-ՄԱՐԳԱՅԻՆ ՇՈՂԵՐ

Ճահճոտ և ճահճա-մարգային հողերի ծագումների տարբերությունը մենք արդեն քննություն առանք. ճահճոտ հողերը գտնվում են տափաստանի «ճալա»-ի իջած մասում, վորտեղ նրանց պատկանում է մի բավականաչափ լայնատարած շերտ, վորը ծավալվում է մոտ 1 կիլոմետր կրկնետորի յերկու ասիերով, նրա վորջ յերկայնությամբ: Ծահճա-մարգային հողերը տարածված են կզղիսանման առանձին-առանձին նախալեռային բարձր մասում և նեղ ժապավենի նման հուպ են տալիս Արազ գետին, նրա ամբողջ տարածության վրա: Առաջ ենք բերում այստեղ այդ հողերի փորած բնորոշ կտրվածքների նկարագրերը:

Կտրվածք № 18-ը՝ վար իջած շերտի ճահճոտ հողի Կտրվածքը գտնվում է Կտրաբուրուն քրդական գյուղից մի վերստ հեռավորության վրա, ուղղությամբ դեպի գետը, հոյակապ արոտատեղ հողամասի վրա, վորը ծածկված է խիտ խոտեղեն բուսականությամբ. ամենից շատ տարածված են այստեղ յեղիզը և «սվինորոյ»-ը (свиной): Ի դեպ, հիշենք, վոր համաձայն մեր տեղեկությունների, վոր քաղել ենք Սարգարապա շրջանի հողերը անցալ տարի հետազոտելիս, «սվինորոյ»-ի (Cynodon dactylon) ներկայությունը լավ ցուցանիչ է աղբրի կուտակման բացակայությանը: Հողամասը թեթև թմբերով ծածկված (кочиковатую) հարթավայր և հանդիսանում, վորը մակերեսից տամկացած է և մի քիչ ճահճոտ (топкая): Վերտիկալ պրոֆիլը ցույց է տալիս հետևյալ պատկերը. առաջին խավը՝ 0,9 մ. մինչև 2 մ., ներկվածքը՝ մուգ-գորշ գրեթե սև, վորը ներքև կտրուկ կերպով՝ բաց դույնի յե փոխվում է ապա դարչինի յերանգ և ընդունում. խավը՝ սպտիկ ճիմավորված է (задернен). պոկվում է մեծ-մեծ կտորներով բա՜նի միջոցով, պարզ ընկուզային, կավային:

2-րդ խավ՝ 9—32 մ., խայտարղես ներկվածք, բազմաթիվ ժանգոտ բծեր, անստրուկտուր, ճապաղ (визкий), կավային (глинистый):

3-րդ խավ՝ 32—88 մ., գորշ-միխակագույն, անստրուկտուր, ճապաղ (визкий), կավային:

4-րդ խավ՝ 88—108 մ., մուգ, գորշ-կապույտ (сизевато-глиеый) անստրուկտուր, թաց, կավային, բազմաթիվ ածխային (углистых) ֆնացորդներով: Վորջ կտրվածքը լիքն է ամենուրեք ցաք ու ցրիվ յեղած կաբոնատներով (скоплениями карбонатов), ուստի յեռացումը (вскипание) աղաթթվից ավելի ուժեղ է լինում. 97 մ. խորության վրա յերևաց գրունտի շերտ:

Կտրվածք № 11՝ ընդարաքսյան մասի ճահճա-մարգային հող, նետվածքի գծերով (с чертами наноса), Կտրվածքը գտնվում է Արապից 200—300 մետր տարածության վրա, «Արազգայան» սահմանակից պահականո-



ցից վոչ հետու, հարթավայր հրապարակի վրա, խիտ յեղեգնուտ բուսակա-  
նության մեջ:

Առաջին խավ՝ 0-26 սմ., բաց դեղին-դարչնագույն (палево-бурый),  
անստրուկտուր, ճիմավորված, կավավազա (супесь), թեթև-ծակոտավոր  
(слабо пористый) յերկաթային կեղծ միցելիտմով:

2-րդ խավ՝ 26—71 սմ., բաց մեխակագույն, պարզ-ընկուղային սրխ-  
մված, արմտքներով (с корешками) և ճերմակ կեղծ միցելիտմով, կա-  
վային:

3-րդ խավ՝ 71—100 սմ., անստրուկտուր, փոխր ավազակավ (рассып-  
чатая супесь). յեռ և գալիս բոլոր խավերում (вскипание по всем слоям).

Կտրվածք № 15՝ նախալեռնային բարձր շերտի հող, ճահճա-մարգային,  
գտնվում և Ավշար և Հայջա գյուղերի միջև, կիսաճանապարհին, Արաղդա-  
յան ջրանցքից 40 քայլի վրա, նրա աջ կողմը, հարթավայր մարդագետնի  
վրա, վորը ծածկված և յեղեղով, ասպաստով (люцерной) և այլն:

1-ին խավ՝ 0—7 սմ., դարչինագույն, փոշոտ մանր-ընկուղային, շատ ճի-  
մավոր, կավայնոտ, խոնավ, բազմաթիվ կիսանեխված մնացորդներով,  
յեռալը բուռն:

2-րդ խավ՝ 7—23 սմ., բաց-դարչինագույն, մանր ընկուղային, պա-  
կաս ճիմավոր, կավային, տամուկ. նույն տեսակ մնացորդներով, յեռալը՝  
պակաս ուժեղ:

3-րդ խավ՝ 23—100 սմ., բաց-մեխակագույն, շեկ, խորտուրորտ, ճա-  
պող, կավային. յեղեգների արմատների ընթացքների վրա շաղվածքը  
ժանգոտ-յերկաթային, շատ տամուկ, յեռում և թույլ:

Համաձայն այս 3՝ նկարագրերի, կարելի չե արձանագրել այն ընդ-  
հանուր բնորոշ գծերը, վորոնք հատուկ են ճահճուտ և ճահճա-մարգային հո-  
ղերին՝ վերնախավը սաստիկ ճիմավոր, ստորե դասված խավերը՝ ճապող և  
անգամ կաշու (липкий). պարզ արտահայտված ընկուղային կազմվածք,  
կեղծ միցելիտմի ներկայություն, աղերի առատ կուտակումների բացա-  
կայություն և կիսանեխված բույսերի մնացորդների առատություն, բույ-  
սեր, վորոնք դեռ չեն կորցրել իրենց կազմվածքի նախնական ձևերը և  
սյուսե անկներև կերպով վիայում են, թե վորչափ դժվար են կատարվում  
բրգանական մնացորդների նեխումների պրոցեսներն այս հողերում: Վեր-  
ախավերի ներկվածքը տարբեր ե. միջին, ցածր մասում, ինչպես հիշեցինք,  
սուզ-գորշ ե. բարձր նախալեռնային շերտում հաճախ դարչինագույն ներկ-  
վածքին միախառնվում են կարմրագույն կամ աղյուսագույն յերանգներ.  
Զնգարազայան շերտում ներկվածքը հաճախ մեխակագույն ե:

Այս հողերի հետաքրքիր առանձնահատկությունն և հանդիսանում  
վերնախավի պարզ արտահայտված ընկուղային ստրուկտուրան: Բնավ  
ընդհուդունելի չե այն կարծիքը, թե այդ ընկուղային կազմվածքն անտա-  
հանողերի հինավուրց մնացորդը (բելիկո) կարող և լինել: Ավելի հավանա-  
ան և թվում, վոր ընկուղային կազմվածքն ստացվել և բացառապես իր  
ետեանք այն աղբեցություն, վորն ունեցնլ և հողի վրա առատ յեղեգնուտ  
ուսականությունը և նրա ուժեղ զարգացած արմատային սխտեմը:

Ցեղեզի աղբեցությունը՝ Արաղդայան տափաստանի հողերի կազմվա-



ծության վրա (структурность) համահման է, ըստ յերևույթին, առվույտի այն ազդեցությունը Նոսովյան գլուղատնտեսական կայարանի հողերի կազմվածությունն զրա, վորը մատնանշում է պրոֆ. Գեդրոյցը:

Նրա հայտնած յենթադրությունը առվույտի մասին, վորին հատուկ է նույնպես ուժեղ դարգացած արմատային սիստեմը, լինվին կիրառելի յեն նաև այս դեպքում: Կարելի յէ հիշել այստեղ մի շարք դատողություններ. յեղեգի ազդեցության մասին ընկուղային կազմվածքի գոյացման վրա: Արմատային սիստեմի ներգործությունը կարող է մի կողմից լինել մեխանիկական, վորը արտահայտվում է հողային մասնիկների սխմվածության և հպվածության ձևով: Կարելի յէ յենթադրել, վոր յեղեգի ալմատային սիստեմն արտադրում է (выделяет) վորևէ որգանական միացումներ, վորոնք ոժտված են մակարդելու և սոսնձելու ընդունակությամբ: Գուցէ, ընկուղային կազմվածքը Արաղլայան տափաստանի հողերի մեջ ստեղծվում է յեղեգի և յերկածխածխային կալցիումի (calcium) զուգորդող գործողության ազդեցության տակ, վորով, ինչպես այդ ցույց են տալիս վերլուծումները, բավականին առատ են այդ հողերը. յեղեգը, նպաստելով աղերի ուժեղացված տրանսպիրացին, առհասարակ առաջացնում է այսպիսի դեպքում միաժամանակ կալցիումի բիկարբոնատի վերելքը, վորը ուժեղ մակարդում է թէ հողային կոլլոյդները և թէ ալելի խոշոր հողային սոսպանսիաները, իբր հետևանք այն հանգամանքի, վոր հողերի կլանող կոմպլեքսը հաղեցվում է նրանով, կոլլոյդալ նյութեղենների ագրեգատներն ստեղծում են ամուր և պարզ ստրուկտուրային առանձնություններ:

Յերկու բարձր շերտերում, գլուղերին կից յըջաններում, ճահճա-մարգային հողերի մեջ, պատահում են հողամասեր, վոր մշակում են բնակիչները: Այդ վայրերի հողերը հետաքրքիր են նրանով, վոր նրանց մեջ շատ ալելի թույլ են արտահայտված ճահճա-մարգային տիպարի հատակնիշները, դրանց մեջ արդեն մենք չենք գտնում վերնախավի ճապարկություն ու ճիմավորումը. մշակելու իբր հետևանք ընկուղային կազմվածքը լինում է խախտված կամ շատ աննկատելի կերպով արտահայտված. ներքևի խավերը թույլ չափով են տամուկ. իսկ վոր նրանք ամենասերտ կերպով են պատկանում ճահճա-մարգային հողերի տիպարին, այդ մասին վկայում է այն հանգամանքը, վոր դրանց մեջ հլ են գտնվում նույնպիսի կիսանխաված մնացորդները և յերկաթային կեղծ միցելիումի հետքերը, այլ և այն փաստը, վոր նրանք տեղեկատրակ կերպով հարում են այս տիպիկ ճահճա-մարգային հողերի հրապարակներին: Հիշյալ հողամասերի վրա մեծ մասամբ բամբակի ցանքներ են տարածվում, վորի ծիլերը հաճախ կարողանում են վկայել նրա բավականին հաջող բուսնելու մասին. բացի բամբակից մշակվում են նաև հացի մշակություններ:

Պետք է կարծել, վոր ճահճա-մարգային հողերի այս հողամասերի հիմնական մորֆոլոգիական և ֆիզիկո-քիմիական հատկությունների բարեփոխումը կատարվել է, գլխավորապես, բազմամյա և, ըստ յերևույթին, հաջող մշակման հետևանքով և դրանով խախտվել է ճիմայնությունը, կապիլլար վերելքը և խոչընդոտ է հարուցվել յեղեգի խիտ բուսականության սնկուն: Ահա թե ինչու այս հողերը մենք բնորոշում ենք իբր մշակույթից կազմավորված հողեր:

կազմաւուծված ճանճա-մարդային հողերը սովնի տարածված են նախախոնային մասում, վորտեղ նրանք ծավալվում են գրեթե առանց ընդմիջումների Տիշտ գյուղից մինչև Յանըխ գյուղը, Արաղդայանի գլխավոր ջրանցքի յերկու կողմերով, Ընդարազյան շերտում նրանք պատահում են միայն Սմոլենսկ գյուղի և «Սերմտնտես»-ի (СЕРМОТ) շրջանում:

Դրանց ուղղաձիղ պրոֆիլի պատկերը տալիս են 6-րդ և 52-րդ կտրվածքների հետևյալ նկարագրերը.—

Կտրվածք № 6-ը տափաստանի նախախոնային բարձր շերտի ճանճա-մարդային հող և, մշակվելուց կազմաւուծված: Կտրվածքը փորված է Հայջա գյուղի դիմաց, Արաղդայանի գլխավոր ջրանցքից կես վերստի վրա, աջ կողմով, գարու ցանքսերով զբաղված հարթավայր դաշտում. նրան հարում են բամբակի լավ ցանքսերը:

I խավ՝ 0—9 սմ., բաց դարչինագույն՝ կարմիր յերանգով, խոշոր-գնդաձև, փխրուն, ավազակավային (суглинистый) արմտիկներով և արմատներով, յեռում և ուժով:

II խավ՝ 9—26 սմ. դարչինագույն՝ մեխակագույն յերանգով, անորոշ մանր ընկուզային, քիչ սխմված, կավային, ցանցառ ածխային մնացորդներով և յեղեղի արմատների ընթացքներով, յեռում և ուժով:

III խավ՝ 26—70 սմ., մեխակագույն-շեկ, անորոշ գնդաձև, մի քիչ տամուկ և ճապող, նույնպիսի մնացորդներով, կավային, յեռում և նույնպես:

Կտր. № 52-ը՝ ընդարազյան մասի ճանճա-մարդային հող, մշակվելուց կազմաւուծված (деформированная): Կտրվածքը փորված է Արաղդայան տափաստանի հենց սկզբում, № 2 բաշխիչ ջրանցքի սկզբից 30 քայլի վրա, մի փոքրիկ, բամբակ ցանված հողամասի վրա. բամբակը, նայած հետքերին, բավականին բավարար է աճած յեղել-յերկու կողմից ցանքսերը շրջապատված են մեծ աղահողերի քաշալ բծերով, վորոնց ուղղութեամբ ձիւերն ակներև կերպով վատանում են:

